ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը կրթական և գիտամշակութային գործունեություն իրականացնող հաստատություն է: Նրա առաքելությունն է նպաստել հանրապետության հյուսիսարևելյան սահմանամերձ գոտում գտնվող տարածաշրջանի տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի զարգացմանը: Մասնաճյուղը 2016-2020 թթ. զարգացման ծրագրի համաձայն է պլանավորում իր գործունեությունը, որի գերակա նպատակն է ապահովել բարձրորակ կրթություն, իր գիտական հետազոտություններով, նորարարական ուսուցմամբ ժողովրդական հին ու նոր արհեստները արվեստին մոտեցնելու և կիրառելի դարձնելու հետևողականությամբ նպաստել տարածաշրջանում հայագիտության, հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և բնական գիտությունների ու մշակույթի զարգացմանն ու նորովի մատուցմանը: Մասնաճյուղը կարևորում է իր դերը տարածաշրջանում, իր արտաքին և ներքին շահակիցների ցանկությունները, գնահատում իր հնարավորությունները, կադրային ներուժը և կազմակերպում արդարացված և նպատակային ուսումնառություն: Ուշադրության կենտրոնում առաջին հերթին ուսանողի կրթական ձեռքբերումները, ուսումնառությունից նրա բավարարվածությունը և հաջողություններն են: Մասնաճյուղն իր ուսանողներին առաջարկում է համակողմանի գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ապահովող կրթական ծրագրեր, ձգտում է աշխատողներին և ուսանողներին տրամադրել բարձրորակ կրթություն և հետազոտություններ իրականացնելու համար անհրաժեշտ ժամանակակից ենթակառուցվածքներ և բարենպաստ միջավայր, իր գործունեության բոլոր բնագավառներում ապահովել որակի շարունակական բարելավում և այլն:

Մայր բուհի անմիջական աջակցությամբ և հովանավորությամբ մասնաճյուղը պատվով ծավալում է իր գործունեությունը տարածաշրջանում: Նրա կարևոր ձեռքբերումներն են աշխատաշուկայի պահանջներին համահունչ մասնագիտություններով ուսումնառության կազմակերպումը, կրթական վերջնարդյունքներով ձևակերպված և ներդրված 16 կրթական ծրագրերն ու դասավանդվող բոլոր դասընթացների համար փաթեթները, որակի ներքին ապահովման գործընթացը, կրեդիտային համակարգի և էլեկտրոնային տեղեկատվական «SuperVision» համակարգի լիարժեք կիրառումը:

Մասնաճյուղի ունեցած հեղինակության և մատուցած որակյալ կրթության մասին են վկայում շրջանավարտների երախտագիտության խոսքերը և նրանց տված գնահատականները: Մասնաճյուղի առկա ուսուցմամբ 165 շրջանավարտների 92,4 %-ը բավարարված է բուհում իր ստացած կրթությունից, 97,5 %-ը՝ պրոֆեսորա-դասախոսական կազմից: Շրջանավարտների 92 %-ը խորհուրդ է տալիս իր մերձավորներին և ընկերներին ընդունվել ԵՊՀ ԻՄ: Մասնաճյուղը հպարտանում է իր՝ արտաքին շահակիցների կարծիքով տարածաշրջանի աշխատաշուկայում մրցունակ շրջանավարտներով: 2016/2017 ուստարում միջազգային չափանիշներին համապատասխան երկլեզու (հայերեն և անգլերեն) հավելվածով դիպլոմներ է հանձնվել մասնաճյուղի 416 շրջանավարտի (165-ը՝ առկա և 251-ը՝ հեռակա ուսուցման): Դիպլոմների հանդիսավոր հանձնման արարողության ժամանակ 24 շրջանավարտի Մայր բուհի ռեկտորն է հանձնել գերազանցության դիպլոմներ:

Մասնաճյուղն իր կատարած ուսումնասիրությունների շնորհիվ անմիջապես արձագանքում է աշխատաշուկայի պահանջներին՝ վերաբացելով կամ փոխարինելով մասնագիտություններն ավելի ժամանակակից մասնագիտություններով: Արդարացված ներդրում եղավ առկա և հեռակա ուսուցմամբ «Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրերով ուսումնառության կազմակերպումը: «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրով 2016/2017 ուստարում ընդունելության կազմակերպումը, որն ունեցավ 44 առաջին կուրսեցի, ուղղակի արձագանքն էր տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջների: Արդարացված էր նաև «Դիզայն» կրթական ծրագրով ուսումնառության կազմակերպումը:

Հաշվետու ուստարում որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշերին համապատասխան՝ մասնաճյուղում կազմվել և հաստատվել են «Սոցիալական աշխատանք», «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերը՝ 2017/2018 ուստարում դրանցով ուսումնառություն կազմակերպելու համար:

2016/2017 ուստարում մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ 10 մասնագիտությունների գծով ընդունվել է 196 դիմորդ (նախորդ ուստարվա 161-ի փոխարեն), այդ թվում 38-ը՝ անվճար, 123-ը՝ վճարովի, իսկ հեռակա ուսուցմամբ 7 մասնագիտությունների գծով՝ 201 դիմորդ (նախորդ ուստարվա 217-ի

փոխարեն): Նախորդ տարվա համեմատ նկատելի է դիմորդների թվի էական աճ առկա ուսուցման համակարգում:

Մասնաճյուղի դիմորդների շուրջ 99 %-ը (228 դիմորդից 225-ը) Տավուշի մարզի դպրոցների շրջանավարտներն են: Ընդունելության համակազմի պահպանման և ընդլայնման համար մասնաճյուղը շարունակաբար ակտիվացնում է համագործակցությունը մարզի միջնակարգ և ավագ դպրոցների հետ, ապահովում մասնաճյուղի ակտիվ գովազդարշավը: Կրթօջախն ունի պայմանագրեր մարզի 4 ավագ դպրոցների ու քոլեջների հետ և հստակ կազմված ժամանակացույցով կազմակերպել է հանդիպումներ մարզի 4 ավագ և 50 հիմնական դպրոցների, ինչպես նաև Իջևանի և Բերդի վարժարանների շուրջ 970 աշակերտների հետ: Պարբերաբար կազմակերպվել են նաև դպրոցների բարձր դասարանների աշակերտների ճանաչողական և գործնական այցեր մասնաճյուղ: Հաշվետու ուստարում համագործակցության շրջանակն ընդլայնվել է, և Մասնագիտական կողմնորոշման և պրակտիկայի կազմակերպման (ՄԿՊԿ) բաժինը հանդիպումներ է կազմակերպել նաև Գեղարքունիքի մարզի Ճամբարակի տարածաշրջանի 6 դպրոցներում: Պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներն այցելել են մարզի դպրոցներ, ակնարկային դասախոսություններ կարդացել աշակերտների համար, տվել են անհրաժեշտ խորհրդատվություն:

Դիմորդների հավաքագրման գործընթացում կարևոր նշանակությունն ունեն հանրակրթական տարբեր առարկաների գծով ԵՊՀ-ի հետ համատեղ կազմակերպվող օլիմպիադաները: 2016/2017 ուստարում դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար կազմակերպված օլիմպիադաներին մասնակցել են մարզի 4 ավագ, 30 միջնակարգ դպրոցների և 2 վարժարանների շուրջ 300 աշակերտներ, նրանցից 60-ը հաղթահարել են 1-ին փուլը և մասնակցել ԵՊՀ-ում կազմակերպված օլիմպիադայի 2-րդ փուլին: Տարբեր պարգևատրումներ են ստացել 20 աշակերտ, որոնցից 2-ը՝ 1-ին, 2-ը՝ 2-րդ, 2-ը՝ 3-րդ կարգի դիպլոմներ, 9 աշակերտ ստացել են գովասանագրեր:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը ակտիվորեն շարունակում է համագործակցությունը միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների հետ՝ նրանց բարձր առաջադիմությամբ շրջանավարտների կրթությունը մասնաճյուղում շարունակելու գործընթացի շրջանակներում: Հաշվետու ուստարում կրթությունը շարունակելու նպատակով մասնաճյուղի 7 մասնագիտությունների գծով քոլեջներից շուրջ 18 հայտ է ներկայացվել:

Գործող մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունն ապահովելու նպատակով տպագրվել և դպրոցներին, հիմնական գործատուներին ու շահագրգիռ այլ կազմակերպությունների են տրամադրվել ԵՊՀ-ի հրատարակած «Դիմորդի ուղեցույցը», մասնաճյուղի, Կիրառական արվեստի ֆակուլտետի և հեռակա ուսուցման բաժնի նաև վրացերեն և պարսկերեն լեզուներով պատրաստված գովազդային բուկլետները (350 օրինակ) և տեսաերիզները: Առաջին կուրսեցիների համար կազմվել և մասնաճյուղի կայքում տեղադրվել է «Առաջին կուրսի ուսանողի ուղեցույցը», որի նպատակն է առաջին կուրսեցիներին ծանոթացնել մասնաճյուղի կառուցվածքին, ուսումնառության կանոններին, ուսանողների իրավունքներին ու պարտականություններին, գիտամանկավարժական գործընթացի կազմակերպմանը և ներհամալսարանական կառույցներին ու նրանց գործունեությանը: Այս ուղեցույցն ունի ոչ միայն մեթոդական, այլև գովազդային կարևոր նշանակություն:

Մասնաճյուղի հարստությունն իր ուսանողներն են: 2016/2017 ուստարում մասնաճյուղն ունեցել է բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցմամբ սովորող 1685 ուսանող, նրանցից 1533-ը՝ վճարովի համակարգում:

Պետության կողմից ուսման վարձի (ուսանողական նպաստի ձևով) լրիվ փոխհատուցում է ստացել 115 ուսանող (այդ թվում՝ 4-ը արտամրցութային): Պետական և ներբուհական կրթաթոշակներ են հատկացվել մասնաճյուղի 140 ուսանողների, որոնցից անվանական կրթաթոշակ է ստացել 10 ուսանող: 2016/2017 ուստարում ուսման վարձի մասնակի փոխհատուցումից օգտվել է 470 ուսանող, այդ թվում՝ 183-ը՝ առկա ուսուցման համակարգում:

Հաշվետու ուստարում ուսումնական գործընթացի բարելավման և արդյունավետ կազմակերպման համար մասնաճյուղում կատարվել են լսարանների, արվեստանոցների, լաբորատորիաների և այլ ուսումնական տարածքների վերանորոգման (շուրջ 1781 ք.մ.) աշխատանքներ, 365 ք.մ. փայտե հատակ վերանորոգվել կամ փոխարինվել է, հիմնանորոգվել է 300 ք.մ. ցեմենտբետոնե ծածկույթ, կատարվել է ուսումնական տարածքների տեխնիկական վերազինում և այլն: Ուսումնառության գործընթացը կազմակերպվել է հետևյալ ռեսուրսներով՝ տեսասարքով համալրված համակարգչային 5 սրահ և 5 լսարան, ինտերակտիվ ուսուցման (On-line) 1 լսարան, լեզուների ուսուցման 2 մասնագիտական լսարան, 1 մասնագիտական լաբորա-

տորիա, 8 արվեստանոց: Առանձնահատուկ պետք է նշել ԵՊՀ-ի թանկարժեք նվիրատվության մասին՝ էլեկտրոնային տախեոմետր, որով «Քարտեզագրություն և կադաստրային գործ» կրթական ծրագրի ուսումնառողները զարգացնում են իրենց մասնագիտական կարողությունները: Համապատասխան լսարանները և աշխատատեղերը հագեցված են եղել 53 տպող և պատճենահանող սարքերով, ձեռք է բերվել 2 գունավոր տպող սարք, գործում է ներքին համակարգչային ցանց, որը միավորում է շուրջ 172 համակարգիչ:

Մասնաճյուղում կայուն ներդրված է որակի ներքին ապահովման համակարգը, որի գործընթացների շրջանակներում իրականացվել են որակի շարունակական բարելավմանը միտված փաստաթղթային հիմքերի համալրում, վերանայում և ներդրում, իրականացվել են խորհրդատվական աշխատանքներ, ներքին և արտաքին շահակիցների շրջանում անց են կացվել պլանավորված հարցումներ, կատարվել են դրանց արդյունքների համալիր վերլուծություններ: Կազմակերպվել է մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնագնահատման հերթական՝ 3-րդ զեկույցի հրապարակայնությունը և տպագրումը:

Ներդրվել և արդյունավետ գործում է մասնագիտական կրթության կառավարման յուրահատուկ մոդելը՝ բակալավրի կրթական ծրագրի ղեկավարի «ինստիտուտ»-ը, որը մասնաճյուղում ստեղծել է ինքնազարգացող մանկավարժական միջավայր: Ըստ մասնաճյուղի զարգացման 2016-2020 թթ. ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույցի՝ կրթական ծրագրերի ղեկավարները Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի մասնագետների անմիջական աջակցությամբ վերանայել են գործող ծրագրերի կրթական վերջնարդյունքները ՈԱՇ-ի պահանջներին և միջազգային առարկայական հենանիշերին համապատասխան, դասախոսների և 4-րդ կուրսի ուսանողների հետ կազմակերպել են դրանց քննարկումներ: Այնուհետև համապատասխանեցվել են ծրագրի և նրա բաղկացուցիչ մասը կազմող դասընթացների կրթական վերջնարդյունքները, կազմակերպվել են դասավանդման, ուսումնառության և հետազոտության փոխկապակցման ժամանակակից փորձի և բակալավրի կրթական ծրագրերում դրանց կիրառման հնարավորության ուսումնասիրություններ և քննարկումներ, ապա վերանայվել են կրթական վերջնարդյունքների ձևավորման համար ընտրված դասավանդման և ուսումնառության մեթոդները: Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի

կողմից պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում առցանց հարցման միջոցով կատարված ուսումնասիրությունների արդյունքների համաձայն՝ դասախոսների 78 %-ն իր գիտական գործունեության արդյունքները ներառում է դասախոսություն-ներում, դասընթացները կազմակերվպում են բավարար մակարդակի հետազոտական տարրի ընդգրկմամբ՝ դրա միջոցով ուսումնառության ընթացքում ուսանողի մեջ ձևավորելով վերլուծական և քննադատական հմտություններ: Արդյունավետ գործում են նաև բանավեճի ակումբը և կրթական ծրագրերի ղեկավարներին աջակցող ուսանողական հանձնաժողովները, որոնց նպատակն է ազատ և անկաշկանդ մթնոլորտում քննարկել ուսանողներին հուզող տարբեր հիմնահարցեր: Պարբե-րաբար իրականացվում են հանդիպում-քննարկումներ ֆոկուս-խմբերի հետ և այլն:

Համալրվել և վերլուծվել են մասնաճյուղի գործունեության գնահատման առանց-քային ցուցանիշները (ԳԱՑ 2011-21016), կազմվել է համապատասխան հաշվետվու-թյուն:

Մասնաճյուղի կարևորագույն ներուժը և հաջողության հիմնական գրավականը նրա բարձրակարգ գիտամանկավարժական կազմն է: Հաշվետու ուստարում մասնաճյուղում դասավանդել են հիմնական և համատեղությամբ 126 դասախոսներ, այդ թվում՝ 3 պրոֆեսոր (2.4 %), 38 դոցենտ (30,1 %), 51 ասիստենտ և 34 դասախոս (67.5 %), որոնցից գիտական աստիճանով՝ 3 դոկտոր և 66 թեկնածու, ընդ որում՝ գիտական աստիճան ունեցող դասախոսների հաշվեկշիռը 50 %-ից ավելի է: Մասնաճյուղում դասախոսների միջին տարիքը 47 է. մինչև 35 տարեկան դասախոսների թիվը 30 է (23,8%), 36-65 տարեկան՝ 87 (69,1 %), 65-ից բարձր՝ 9 (7,1 %): Կանայք կազմում են հիմնական դասախոսական կազմի 45,25 %-ը (57): 2016/2017 ուստարում մասնաճյուղն ունեցել է 1 դոկտորանտ, 2 ասպիրանտ և 9 հայցորդ: Լրիվ հաստիքային համարժեքով ուսանող-դասախոս հարաբերակցությունը կազմել է 20,6:

Դասախոսների (հատկապես երիտասարդ) գիտամանկավարժական և մասնա-գիտական գործունեությունը գտնվում է մասնաճյուղի տնօրենության ուշադրության կենտրոնում, որն աջակցում ու խրախուսում է նրանց ինքնակրթության և ինքնազար-գացման բոլոր դրսևորումները: Հաշվետու ուստարում անբասիր աշխատանքի համար մասնաճյուղի երկու դասախոս պարգևատրվել են ԵՊՀ-ի հուշամեդալով, 5-ը երաշխավորվել են դոցենտի գիտական կոչում ստանալու համար:

Մասնաճյուղում հաջողությամբ գործում է Դասավանդման առաջավոր փորձի փոխանցման և երիտասարդ դասախոսների աջակցման կենտրոնը, որի կազմակերպած դասընթացները նպատակ ունեն բարձրացնել երիտասարդ դասավանդողների որակավորումը, կատարելագործել նրանց դասավանդման մեթոդիկան, նպաստել ուսումնական գործընթացում կրթական նորագույն տեխնոլոգիաների կիրառմանը: Հաշվետու ուստարում կենտրոնի կողմից երիտասարդ դասախոսների համար կազմակերպվել են նպատակային 7 դաս-քննարկումներ: Ընդ որում՝ երիտասարդները պարբերաբար մասնակցում են փորձառու դասախոսների դասերին կամ նրանց հրավիրում են իրենց դասերին: Ուսանողների և երիտասարդ դասախոսների համար արդյունավետ գործում են նաև անգլերեն և ֆրանսերեն լեզուների ուսուցման կենտրոնները:

Դասախոսների գիտական գործունեությանն աջակցում է նաև մասնաճյուղի «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուն, որտեղ անվճար տպագրվում են աշխատակիցների հոդվածները: Հաշվետու ուստարում «Ակունք»-ում հրատարակվել են մասնաճյուղի դասախոսների ավելի քան 35 հոդվածներ:

Հաշվետու ուստարում հրատարակվել են նաև մասնաճյուղի դասախոսների 2 մենագրություն, 5 ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկ, 63 գիտական հոդված, զեկուցման 1 թեզիս: 1 դասախոս ընդգրկված է ՀՀ ԳԿ 2 պետական դրամաշնորհային ծրագրերում, 10 դասախոս մասնակցել է տարբեր գիտաժողովների, որից 3-ը ՀՀ-ում, 2-ը արտասահմանում և 3-ը ԱՊՀ երկրներում կայացած միջազգային գիտաժողովներ են: 6 դասախոս մասնակցել է 12 հանրապետական և 4-ը՝ մեկական միջազգային ցուցահենդեսների, 2 դասախոս կազմակերպել է անհատական ցուցահանդես (ՀՀ-ում, ԱՄՆ-ում): Գիտությունների թեկնածուի գիտական աստիճան է ստացել մասնաճյուղի 1 երիտասարդ դասախոս:

ԵՊՀ ԻՄ-ի դասախոսական կազմի մասնագիտական կարողությունները, մանկավարժական հմտությունները, դասավանդման որակը և արդյունավետությունը պարբերաբար գնահատվում են ԵՊՀ-ի կողմից իրականացվող ուսանողական հարցումների միջոցով: 2016/2017 ուստարվա 1-ին կիսամյակի հարցումների արդյունքների համաձայն՝ բոլոր մասնագիտությունների գծով միջին թվաբանական միավորն ըստ ամբիոնների բարձր է 4.65-ից:

Համալսարանականներին ու մարզի քաղաքացիներին գեղագիտական, համամարդկային արժեքներ փոխանցելու գործում իր ուրույն տեղն ունի մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետը, որի ուսանողների և դասախոսների կողմից կազմակերպված գեղարվեստական աշխատանքների ցուցահանդեսները, նրանց կարած հագուստների ցուցադրություններն ընդունվում են ոգևորությամբ: 2016/2017 ուստարում կազմակերպվել են ցուցահենդեսներ՝ նվիրված Մայրության և գեղեցկության տոնին, Մեծ եղեռնի զոհերի հիշատակին, Հաղթանակի օրվան, ընդ որում՝ ցուցահանդեսներին մասնակցելու համար առաջադրանք տրվել է բոլոր ուսանողներին, ապա մասնագիտական հանձնաժողովի կողմից ընտրվել են ցուցադրության արժանի աշխատանքները: Հաշվետու ուստարում ֆակուլտետի ուսանողները դասախոսների ղեկավարությամբ կատարել են պլեներային աշխատանքներ մարզի տարբեր գեղատեսիլ վայրերում:

Կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման գրավականներից է պրակտիկաների ճիշտ և նպատակային կազմակերպումը: Ըստ մասնաճյուղի զարգացման՝ 2016-20 թթ. ռազմավարական պլանի՝ վերանայվել կամ կազմվել են ուսանողների գործնական հմտությունների, ինքնուրույն, ստեղծագործական և հետազոտական կարողությունների զարգացմանը միտված նպատակային պրակտիկաների ծրագրեր, որոնք ապահովում են նաև կապը կուրսային և ավարտական աշխատանքների թեմաների հետ: Տարբեր կազմակերպությունների և հիմնական գործատուների հետ իրականացվել են փոխշահավետ համագործակցային հանդիպումներ: Արտադրական պրակտիկայի վայրերն ընտրելիս հաշվի են առնվել աշխատաշուկայի պահանջները, ուսանողների նախասիրությունները, նաև ուսանողների առաջարկները, որոնք հավաքագրվել են տարբեր ուսումնասիրությունների միջոցով: Հաշվետու ուստարում արտադրական և մանկավարժական պրակտիկա են անցել առկա ուսուցման 184 և հեռակա ուսուցման 207 ուսանողներ: Հատուկ ուշադրություն է դարձվել ուսումնական (դաշտային) պրակտիկայի կազմակերպմանը, իսկ որոշ ֆակուլտետների մի շարք պրակտիկաներ կազմակերպվել են մեկօրյա կամ 2-4 օր տևողությամբ ավտոբուսային երթուղիների ձևով ՀՀ տարածքում, ինչպես նաև քաղաքամերձ հետիոտն երթուղիներով: Ուսումնական պրակտիկա են անցել առկա ուսուցման 129 և հեռակա ուսուցման 105 ուսանողներ:

Ակտիվացվում և ընդլայնվում է համագործակցությունը մասնաճյուղի հիմնական գործատու և նվիրատու կազմակերպությունների հետ: Մասնաճյուղի 4 ուսանող ընդգրկված են եղել VivaCell MTS-ի կրթական ֆոնդում, 9 ուսանող՝ ՀՕՖ-ի Մաթևոսյան կրթաթոշակի ծրագրում: Հայաստանի երիտասարդական հիմնադրամի (ՀԵՀ) կողմից 2016/2017 ուստարվա երկրորդ կիսամյակում հայտարարված մրցույթի արդյունքում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից կրթաթոշակի են արժանացել 25 ուսանող:

Մասնաճյուղն իր հեղինակության ամրապնդման, հասարակական վարկանիշի բարձրացման նպատակով վարում է տեղեկատվության տարածման, գովազդային-լրատվական, քարոզչական համապատասխան քաղաքականություն: ԵՊՀ ԻՄ-ի բոլոր ստորաբաժանումների գործընթացների, իրադարձությունների, կազմակերպված միջոցառումների, հարցազրույցների, անհրաժեշտ հայտարարությունների, ուսանողական կյանքին և միջավայրին վերաբերող նորությունների լուսաբանումը, տեղեկատվության մատչելիությունն ապահովվում է մասնաճյուղի պաշտոնական կայքի (http://ijevan.ysu.am/) միջոցով (եռալեզու տարբերակի իրականացումն ընթացքի մեջ է), «Facebook» սոցիալական ցանցում գործող ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի էջի, ինչպես նաև մասնաճյուղի տարբեր ստորաբաժանումների և ուսանողական կառույցների էջերի միջոցով:

Կառավարման գործընթացի թափանցիկության, աշխատակիցների և ուսանողների իրազեկվածության ապահովման, գործունեության և ուսման մեջ տեղեկույթի փոխանակման տեսանկյունից մեծ է կայքի՝ որպես աշխատանքի արդյունավետության գերժամանակակից գործոնի դերը: Ընդամենը 6 տարվա պատմություն ունեցող կայքը դարձել է ուսանողների «սիրելին»: ԵՊՀ ԻՄ-ի առկա ուսուցման 403 ուսանողներից 203-ը 2017 թ. հարցման ժամանակ պատասխանել է, որ կայքից օգտվում է «շատ հաճախ» ու «հաճախ»: 4.6-ից բարձր միջին գնահատականներով նրանք փաստել են, որ բավարարված են կայքի կառուցվածքից, նորությունների լուսաբանումից, տեղեկատվության ստացման հարմարավետությունից և լիարժեքությունից: Մասնաճյուղի պաշտոնական կայքը 2017 թ. օգոստոսի դրությամբ ունի 204 էջ (նախորդ տարվա 194 էջի փոխարեն), տեղադրված է 1825 նյութ, 7936 ֆայլ (նախորդ տարվա 6051 ֆայլի փոխարեն): Կայքի «ԶԼՄ-ները մեր մասին» էջում տեղադրված են մասնաճյուղի վերաբերյալ տարբեր ԶԼՄ-ների կողմից

հրապարակված հոդվածներ ու տեսանյութեր: Հաշվետու ուստարում 1-ին լրատվականով, “YouTube”-ով, տարբեր կայքերով լուսաբանվել են շուրջ 13 իրադարձություն:

Մասնաճյուղում տարեցտարի բարձրացվում է ներքին և արտաքին տեղեկատվական ռեսուրսների մատչելիությունը, որին աջակցում են անվճար ինտերնետ կապը, էլեկտրոնային ընթերցասրահը, էլեկտրոնային հարուստ պաշարները: Մասնաճյուղի գրադարանային ֆոնդը հաշվետու ուստարում համալրվել է շուրջ 700 միավոր գրականությամբ և ներառում է 15324 գիրք, որից 6510-ը դասագիրք է, 2921-ը ծրագրային գեղարվեստական, 3357-ը՝ ուսումնամեթոդական և ուսումնաօժանդակ գրքեր են, գրադարանը համալրված է 1950 էլեկտրոնային-տեղեկատվական և 586 այլ նյութերով՝ գիտական տեղեկագրեր ու հանդեսներ, քարտեզներ և այլն: Մեծաքանակ ուսումնագիտական և մասնագիտական գրքեր է հատկացրել Մայր բուհը:

Կազմակերպվում և հաջողությամբ լուծվում են Երևանից ժամանող դասախոսների հանգստի և գիշերելու հարցերը: Ուսումնական մասնաշենքերից ոչ հեռու կառուցված մասնաճյուղի հյուրանոցային համալիրն ապահովում է շուրջ 70 դասախոսի կենցաղային խնդիրները, հանգստի ու հարմարավետ աշխատանքի պայմանները: Համալիրն ապահովված է ինտերնետ կապով, կոմունալ բոլոր հարմարություններով:

Ուսանողական և ուսումնագիտական միջավայրի ձևավորման գործում իրենց անփոխարինելի տեղն ունեն ուսանողական համապատասխան կառույցները: Հաշվետու ուստարում ուսանողական խորհրդի (ՈԻԽ) կողմից կազմակերպվել են տարբեր տոների, հիշատակների նվիրված մշակութային և մարզական շուրջ 39 միջոցառումներ, մրցույթներ և հանդիպումներ: ՈԻԽ անդամները մասնակցել են համապետական ուսանողական եռօրյա խորհրդաժողովին, ՄԱԿ-ի ազգային ասոցիացիայի կազմակերպած եռօրյա դասընթացներին, համագործակցել են ՀԵՀ Տավուշի մարզային կենտրոնի, Ինֆոտանի, ՀՈՒԱԱ-ի «Կրթական ավտոբուս» ծրագրի, ՀԿ-ների և բարձրագույն կրթության կազմակերպման փորձագետների հետ՝ կազմակերպելով խաղեր, թեմատիկ դասընթացներ: Մասնաճյուղի 4 ուսանող մասնակցել է «Բազե-2016» հավաքին, նրանցից 2-ն արժանացել են մրցանակների: Մասնաճյուղի «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի ուսանողները հերթական անգամ մասնակցել են ԱՄՆ խաղաղության կորպուսի կողմից կազմակերպված «WRITE ON! COMPETITION 2017» էսսեների մրցույթին: Հանրապետական

փուլի 541 մասնակիցների մեջ մասնաճյուղի 3 ուսանող գրավել են 1-3-րդ տեղերը, իսկ իրենց երկրներում առաջին տեղ գրված 22 երկրների ներկայացուցիչների մեջ միջազգային փուլում 2-րդ մրցանակային տեղ գրված Հայաստանի 2 մասնակիցներից մեկը մասնաճյուղի ուսանողն էր: Ուսանողական գիտական ընկերության (ՈԻԳԸ) կողմից կազմակերպվել են զեկուցումների շարքեր ֆակուլտետներում, սեմինարներ, խորհրդատվական դասընթացներ: ՈԻԳԸ անդամները մասնակցել են «Երիտասարդության խնդիրները և պետության զարգացման միտումները» խորագրով հանրապետական գիտաժողովին:

Ամփոփելով՝ նշենք, որ ինչպես միշտ, 2016/2017 ուստարում ևս Իջևանի մասնաճյուղի գործունեությունը գտնվել է ԵՊՀ ուշադրության կենտրոնում, նրա ամբողջ գործունեությունը, ձեռքբերումներն ու նվաճումները պայմանավորված են Մայր բուհով: